

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

**The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre**



**ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

*ԱՊՐԻԼ*

*2021թ.*

Յ Գորիս Ց

30.04.2021

**ՊՎԾ-ն Սյունիքի չորս խոշոր քաղաքում արդեն մեկ ամիս է՝ ստուգումներ է իրականացնում**

Սյունիքը ո՛չ առաջինն է, ո՛չ վերջինը: Պետական վերահսկողական ծառայության ուսումնասիրության պատճառը մարզի տարբեր ոլորտներում նկատված ռիսկերն են՝ վստահեցնում է ծառայության ղեկավարը և ընդգծում՝ հավելյալ գործոն կարող է համարվել նաև տարբեր պաշտոնյաների վարքագիծը:

**Տիգրան Ուլիխանյան (ՀՀ պետական վերահսկողական ծառայության պետ)** - Երբ որ տեղի են ունենում անբնական գործողություն, մենք դա համարում ենք ռիսկի առաջին ազդակ և, այո՛, մենք տեսնում ենք, որ այդտեղ ինչ-որ բան այնպես չէ, և պետք է ուսումնասիրել, հասկանալ, որ անբնական, անկանոն շարժումներ են անում տարբեր պաշտոնյաներ, որոնք նախատեսված չեն այդպիսի հայտարարություններ և գործողություններ անելու համար:

Սյունիքում ուսումնասիրությունները մեկ ամիս առաջ են սկսվել և միանգամից չորս քաղաքում՝ Մեղրիում, Կապանում, Գորիսում ու Սիսիանում: Այս պահին կառույցը ուսումնասիրությունը գրեթե ավարտել է՝ տեղեկանք են կազմում, կզեկուցեն վարչապետի պաշտոնակատարին: Մինչև այդ պահը Ուլիխանյանը նպատակահարմար չի համարում հրապարակել տեղեկանքի մանրամասները:

**Տիգրան Ուլիխանյան** - Դա ռիսկերի մի մեծ համախումբ է, որը մենք տեսնում ենք, այդ թվում նաև՝ մեր ունեցած բազաներով, որ մեր տրամադրության տակ է՝ տարբեր գործարքներ, այդ թվում՝ մամուլում հրապարակված տեղեկատվություններ, հանրությունից եկող դիմում-բողոքներ և այնպիսի տվյալներ են ստացվել, որ այդպիսի որոշում ենք կայացրել:

ՊՎԾ-ն այցելել է նաև Արմավիր, Լոռի, Շիրակ: Ծառայության նպատակը համակարգային խնդիրները հայտնաբերելն ու լուծելն է: Ուլիխանյանն անդրադառնում է նաև գնումների ոլորտին՝ պետական գնումների մոտ 80 տոկոսը մոնիթորինգի տակ է:

**Տիգրան Ուլիխանյան** - Ավելացել են նաև մեկ անձից գնում կատարելու դեպքերը, սակայն դրանց մեծ մասը արդարացված է՝ նկատում է Ուլիխանյանը և հավելում՝ պետության կարիքների համար կան ծառայություններ և աշխատանքներ, որոնք օբյեկտիվորեն մեկ անձ կարող է մատուցել:

Պետական գնումների բոլոր մրցույթներն ուսումնասիրվում են, անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում էլ գերատեսչությանը գրությամբ տեղեկացնում են:

Գերակշիռ դեպքերում խնդիրները վերացվում են:

Աղբուրը՝ <https://www.1lurer.am/hy/2021/04/30/%D5%8A%D5%8E%D4%BE-%D5%B6-%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-4-%D5%AD%D5%B8%D5%B7%D5%B8%D6%80-%D6%84%D5%A1%D5%B2%D5%A1%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D6%80%D5%A4%D5%A5%D5%B6-%D5%B4%D5%A5%D5%AF-%D5%A1%D5%B4%D5%AB%D5%BD-%D5%A7-%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A5%D6%80-%D5%A7->

**30.04.2021**

**Ադրբեջանական հարձակումներն ուղեկցվել են դաժանություններով ու գլխատումներով. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցը**

2021թ. ապրիլի 28-ի ելույթում Պաշտպանն անդրադարձել է ադրբեջանական զինված հարձակումներին Արցախի նկատմամբ, որի ժամանակ թիրախային հարվածներ են հասցվել խաղաղ բնակչությունը: Թիրախավորվել են կանայք ու երեխաներ, խախտվել են մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերը: Ավելին, Ադրբեջանը պատերազմ է սկսել ուժի բացառման միջազգային կոչերի, այդ թվում՝ COVID-19-ի ընթացքում պատերազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ուղիղ պահանջի կոպիտ խախտմամբ:

Ադրբեջանական կողմն օգտագործել է արգելված կասետային զինատեսակներ՝ թիրախային հարվածներ հասցնելով Արցախի (Լեռնային Ղարաբաղի) քաղաքացիական բնակավայրերի և խաղաղ բնակչության ուղղությամբ: Պաշտպանը շեշտել է, որ ադրբեջանական զինված հարձակումներից սպանվել ու վիրավորվել են նաև Հայաստանի Հանրապետության Սյունիքի ու Գեղարքունիքի մարզերի բնակիչներ:

Ադրբեջանական զինված հարձակումներն ուղեկցվել են անմարդկային ու դաժան վերաբերմունքով, գլխատումներով ու խոշտանգումներով ինչպես ռազմագերիների, այնպես էլ քաղաքացիական գերիների նկատմամբ:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել, թարգմանվել ու վերլուծվել են ավելի քան 300 տեսանյութեր ադրբեջանական զինված ուժերի կողմից կատարված պատերազմական հանցագործությունների վերաբերյալ, այդ թվում՝ կենդանի մարդկանց գլխատումներ, մասնատումներ, խոշտանգման ու անմարդկային վերաբերմունքի դեպքեր: Բոլորն ուղարկվել են միջազգային իրավապաշտպան կառույցներին:

Պաշտպանը շեշտել է, որ Ադրբեջանական իշխանության բարձրագույն մարմինները շարունակում են Ադրբեջանում պետական հովանավորչությամբ հայաստացության ու թշնամանքի, ռասիզմի և ֆաշիստական քաղաքականությունը: Դրա ապացույցներից է նաև Բաքվում 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմին վերաբերող այսպես կոչված «ցուցահանդես-պուրակի» բացումը: Նա ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ այդ վայրում հայ զինվորների մանեկենները հատուկ ներկայացված են նվաստացած վիճակում, իսկ պուրակը բաց է անգամ մանկահասակ երեխաների համար:

Արման Թաթոյանը նշել է, որ ցավոք, այս բոլոր փաստերը միջազգային քաղաքակիրթ հանրությունը դեռ պատշաճ գնահատականի չի արժանացրել, իսկ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» հոչակած «Որևէ մեկը չպետք է դուրս լինի եզրագծից ու որևէ իրավունք չպետք է անտեսվի» կանոնը մեզ համար չդարձավ իրական կյանքում իրական մարդուն պաշտպանող սկզբունք, քանի որ մարդկանց իրավունքների պաշտպանությունը տեղի չունեցավ քաղաքական պատճառներով:

Հանդիպման նպատակն էր ներկայացնել միջազգային մարդասիրական իրավունքի իրագործման խնդիրները, մասնավորապես, խախտումների ազդարարման եղանակները, ժամանակակից աշխարհում մարտահրավերները: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև միջազգային մարդասիրական իրավունքի ընդհանուր սկզբունքների և կարգավորումների մասին հանրությանը և առանձին խմբերին իրազեկելու կարևորությունը:

Արման Թաթոյանը նշել է, որ իր ելույթում արձանագրված բոլոր փաստերը հիմնված են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես սահմանադրական անկախ հաստատության փաստահավաք աշխատանքների արդյունքում ձեռք բերված օբյեկտիվ և հավաստի ապացույցների վրա:

ԵԱՀԿ Անվտանգության համագործակցության ֆորումի կողմից կազմակերպված միջոցառմանը մասնակցել են ԵԱՀԿ անդամ պետությունների ներկայացուցիչներ, Կարմիր խաչի միջազգային կոմիտեո, ՀՀ ՊՆ-ն և այլք:

Աղբյուրը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1661>

**29.04.2021**

### **ԱԱԾ. Սյունիքի ճանապարհի 21 կմ հատվածի վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական միջոցներով**

Սյունիքում ճանապարհի վիճելի 21 կիլոմետրանոց հատվածի վերահսկողությունը կիրականացվի տեխնիկական միջոցների կիրառմամբ: Այս մասին ապրիլի 29-ին Հայաստանի Ազգային ժողովում Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական խորհրդարանական հանձնաժողովի նիստին «Պետական սահմանի մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրինագծերի փաթեթի քննարկման ժամանակ ասաց ՀՀ Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գործերի հրամանատար, գնդապետ Արման Մարալյանը:

Նրա խոսքով՝ վերջին օրերին նշված տարածքում կարգախմբերի թիվն ավելացվել է: «Այս պահին մենք քննարկում ենք տեխնիկական միջոցների օգտագործմամբ այս ճանապարհի ողջ երկայնքով հսկողություն սահմանելու հարցը: Դրա շնորհիվ մենք չենք ունենա ոչ մի մետր անվերահսկելի տարածք: Այժմ այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում», - ասաց Մարալյանը:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/641440.html>

**29.04.2021**

### **Միջադեպ հայ-ադրբեջանական սահմանին. քաղաքացիական հագուստով 8-10 ադրբեջանցի փորձել է անցնել միջդիրքային տարածք. ՀՀ ՊՆ**

ՀՀ պետական սահմանի հյուսիսարևելյան հատվածում, N գորամասի պահպանության տեղամասում, ապրիլի 28-ին, ժամը 11.40-ի սահմաններում, ադրբեջանական Ալիբեյլի բնակավայրի կողմից խախտելով շփման գիծը, քաղաքացիական հագուստով 8-10 անձ անցել են միջդիրքային տարածք, իրենց հետ բերելով 30-40մ երկարությամբ խողովակներ, հավանաբար՝ նշված տարածքից մոտակա ադրբեջանական հենակետ ջուր հասցնելու նպատակով: Նկատելով ՀՀ ԶՈՒ առաջապահ դիրքերի զինծառայողներին, քաղաքացիական հագուստով անձինք շտապ հեռացել են դեպի Ալիբեյլի բնակավայր՝ թողնելով խողովակները

միջոցառումներին տարածքում: ՀՀ ԶՈՒ զինձառայողները ցուցաբերել են զսպվածություն և չեն ենթարկվել սադրանքների: Հակառակորդի աշխատանքները դադարեցվել են: [«Արմենպրես»](#)-ին այս մասին տեղեկացրին ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունից:

Ըստ աղբյուրի՝ ՀՀ ԱԱԾ-ից ստացված տեղեկատվության համաձայն՝ ԱԱԾ սահմանապահ զորքերի պատասխանատվության տակ գտնվող Գորիս-Կապան միջպետական ավտոճանապարհի Որոտան-Դավիթ Բեկ հատվածում սահմանային միջադեպեր չեն արձանագրվել:

ՀՀ ՊՆ-ից նաև հայտնում են, որ ՀՀ զինված ուժերի և ԱԱԾ սահմանապահ զորքերի ստորաբաժանումները վերահսկում են սահմանային իրավիճակը սահմանագոտու ամբողջ երկայնքով և կատարում առաջադրված խնդիրները:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1050826.html>

**28.04.2021**

### **Հայաստանի անտառները ևս տուժել են ֆոսֆորային զինատեսակների կիրառումից. հայկական կողմը հստակ քայլեր է ակնկալում**

Հայաստանի շրջակա միջավայրի նախարարությունը Բնապահպանական կոնվենցիաների գլխավոր քարտուղարներից, միջազգային կազմակերպություններից և գործընկերներից դեռևս ակնկալում է գործնական առաջարկներ և հստակ քայլեր Արցախյան վերջին պատերազմի ընթացքում կիրառված արգելված զինատեսակների արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասի համար Ադրբեյջանին պատասխանատվության կանչելու ուղղությամբ: Այս մասին [NEWS.am](#)-ի գրավոր հարցմանն ի պատասխան հայտնեցին շրջակա միջավայրի նախարարությունից:

Հիշեցնենք, որ 2020-ի նոյեմբերի 3-ին շրջակա միջավայրի նախարար Ռոմանոս Պետրոսյանը համապատասխան գրությամբ դիմել էր բնապահպանական կոնվենցիաների գործադիր քարտուղարներին, միջազգային կազմակերպություններին ու գործընկերներին Արցախի շրջակա միջավայրի և Արցախի բնակչության դեմ կիրառված սպիտակ ֆոսֆոր պարունակող հրկիզվող զինատեսակների առնչությամբ: News.am-ը նախարարից հետաքրքրվել էր, թե պատերազմի ընթացքում և դրանից հետո միջազգային բնապահպանական կառույցներն ի՞նչ քայլեր են ձեռնարկել՝ ՀՀ և ԱՀ տարածքում արգելված զինատեսակներ (այդ թվում ֆոսֆորային նյութեր պարունակող) և միջոցներ կիրառած Ադրբեյջանին պատասխանատվության կանչելու ուղղությամբ, և արդյոք ֆոսֆորային զինատեսակի կիրառման առնչությամբ միջազգային բնապահպանական կառույցների արձագանքը համարում է համարժեք:

«Մինչ այժմ ստացված արձագանքները պարունակում են համերաշխության և երկուստեք խաղաղ գոյակցությանը միտված կոչեր, ինչը բավարար չէ Արցախի խաղաղ գործընթացի առաջ մղման, ինչպես նաև այդ գործընթացի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների համար»,–ասված է նախարարության պատասխանում:

Անդրադառնալով պատերազմի արդյունքում շրջակա միջավայրին հասցված վնասի չափին և բնապահպանական վնասները վերականգնելու ուղղությամբ իրականացվող

քայլերին՝ նախարարությունից շեշտել են. Արցախյան վերջին պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կիրառած միջազգայնորեն արգելված կասետային զինամթերքները, սպիտակ ֆոսֆոր կամ թերմիտային նյութեր պարունակող զենքերը անուղղակի վնաս են հասցրել Հայաստանի և Արցախի շրջակա միջավայրին՝ լայնամասշտաբ անտառային հրդեհներից մինչև օդի, հողի, ջրի կայուն աղտոտում: «Արցախի դեմ հրահրված պատերազմի հետևանքով Ադրբեջանի թշնամական գործողությունները հանգեցրել են «Հայաստան» ՊՈԱԿ–ի ենթակայության տակ գտնվող անտառների հրդեհմանը: Մասնավորապես, «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաձյուղում գրանցվել է 25 հա անտառածածկ տարածքում: Հրդեհի պատճառած վնասը հնարավոր է ճշտել միայն տարածքի ականագերծման աշխատանքների ավարտից հետո: «Ձանգեզուր կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ–ի «Շիկահող» պետական արգելոցում ընդհանուր առմամբ այրվել է 55,91 հա տարածք: Տավուշի մարզում արգելված զինատեսակների կիրառման արդյունքում հրդեհվել է «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաձյուղի 100 հա տարածք, որից 70–ը եղել է անտառածածկ տարածքում: Արդյունքում մինչև աճի դադարեցման աստիճան այրվել է 59 ծառ 108,66 խորանարդ մետր ծավալով: Բնապահպանական վնասի ամբողջ չափը դեռ ենթակա է մոնիթորինգի և գնահատման»,–հայտնել են նախարարությունից:

Նշենք, որ ներկայացված տվյալները վերաբերվում են բացառապես Հայաստանի Հանրապետության Սյունիքի և Տավուշի մարզերի անտառածածկ տարածքներում ֆոսֆորային զինատեսակի կիրառման արդյունքում հասցված վնասներին: Արգելված զինատեսակների կիրառման արդյունքում Արցախի անտառներին հասցված վնասն անհամեմատ ավելի մեծ է: Փաստացի, միջազգային բնապահպանական կառույցները աչք են փակում ֆոսֆորային զինամթերքով Հայաստանի և Արցախի շրջակա միջավայրին հասցված լրջագույն բնապահպանական խնդիրների վրա, մինչդեռ ֆոսֆորային զենքի օգտագործումը հանդիսանում է միջազգային մարդասիրական իրավունքի, սովորության իրավունքի նորմերի ու սկզբունքների, Ժնևյան կոնվենցիաների, ինչպես նաև ՄԱԿ–ի համապատասխան կոնվենցիաներով ու փաստաթղթերով նախատեսված դրույթների կոպտագույն խախտում: Նման իրավիճակում հայկական կողմը պետք է ավելի լայն թափով փաստահավաք առաքելություն իրականացնի և կոնկրետ ապացույցներով կներկայացնի ոչ միայն ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքով Հայաստանի և Արցախի շրջակա միջավայրին հասցված վնասերը, այլևս բարձրաձայնի միջազգային բնապահպանական կառույցների անգործության և անտարբերության մասին:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/641299.html>

**28.04.2021**

**Այո՛, Վահե Հակոբյանի կինը երեկ գտնվել է ՊԵԿ քննչական վարչությունում.**

**ՊԵԿ նախագահ**

Այո՛, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի կինը՝ Էլիզաբեթ Պետրոսյանը, երեկ գտնվել է ՊԵԿ քննչական վարչությունում, քրեական գործի շրջանակներում հարցաքննվել է: Այս մասին այսօր Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ **Էդվարդ Հովհաննիսյանը:**

Նշենք, որ երեկ մամուլում տեղեկություններ էին տարածվել, որ Պետրոսյանը հրավիրվել է ՊԵԿ քննչական վարչություն:

Հարցին, թե ի՞նչ գործով է հրավիրվել, Հովհաննիսյանը պատասխանեց, որ պետք է դիմել այդ հարցով ՊԵԿ քննչական վարչություն, նրանք կգնահատեն՝ նպատակահարմար է տեղեկություն տրամադրել, թե չէ:

Դիտարկմանը՝ քաղաքական ճնշում է դա, Հովհաննիսյանն արձագանքեց. «Ո՛չ, դա քաղաքական ճնշում չի կարելի որակել, քանի որ ձեռնարկը անձնավորությունը ոչ միայն նախկին մարզպետի կինն է, այլ առանձին ինքնուրույն սուբյեկտ է եւ առանձին կազմակերպարավական միավորի ղեկավար է»:

Հաշվի առնելով, որ Սյունիքում վարչապետի այցի օրը տեղի ունեցած սադրանքներից հետո է դա իրականացվում՝ լրագրողն ընդգծեց, որ դրա համար են քաղաքական ճնշում ասում. «Բոլոր համընկնումները հանրությունը փորձում է մեկնաբանել քաղաքական ենթատեքստերի ներքո: Իսկ դուք տեղեկություն ունե՞ք՝ նախկինում նշված անձը հրավիրվել է հարցաքննության», - ասաց ՊԵԿ նախագահը:

Հարցին՝ նախկինում է՞լ է հրավիրվել, նա դրական պատասխան տվեց:

Աղբյուրը՝ <https://armtimes.com/hy/article/212412>

**23.04.2021**

### **«Նման պահվածքով՝ ոչ հարիր հային, առավել եւս տղամարդուն՝ հարցեր չեն լուծում». Գորիսի փոխքաղաքապետ**

Գորիսի փոխքաղաքապետ Մենուա Հովսեփյանը քիչ առաջ դուրս եկավ Քննչական կոմիտեից:

Նա [NEWS.am](https://www.news.am)-ի հետ զրույցում պատմեց՝ ինչ քննչական գործողություններ են իրականացվել իր նկատմամբ:

«Գորիսի մեր տնից են ինձ բերման ենթարկել, բերել են Քննչական կոմիտե, հետո այստեղից չգիտես՝ ինչու տեղափոխել են Երևան քաղաքի վարչություն, այնտեղ մի պղծված անձնավորություն, հետո կհայտարարեմ՝ ով էր այդ մարդը, պաշտոնավոր, ոչ ոստիկան, նման մարդկանց ես ոստիկան կոչել չեմ կարող, որոշ չափով այլանդակություն թույլ տվեց իմ նկատմամբ: Դրա պատասխանն իրենք օրենքի դաշտում պետք է տան, եթե օրենքի դաշտում չտան, այդ ամենից հետո նոր ես կխոսեմ այդ մասին: Ինչ վերաբերում է այս իմիտացիոն շոուներին, որոնք իրականացվում են մեր իշխանությունների կողմից, ես ուզում եմ «ողջույն հղել» մեր շոումենիստ, շոու սիրող կեղծիքի եւ ստի մեջ շաղախված վարչապետին, ուզում եմ եւս մեկ անգամ ասել, որ նման ձեռով, պահվածքով ոչ հարիր հային, առավել եւս տղամարդուն հարցեր չեն լուծում: Այսինքն՝ ինքն ուզում է նման ձեռով սյունեցուն ասել, որ ամեն ինչ նորմալ է, դուք պետք է այսպես հարմարվեք, Սյունիքն էլ վաղ կհանձնեմ, ամեն ինչ նորմալ կլինի: Եւս մեկ անգամ ես հաստատում եմ, որ մենք թույլ չենք տալու», - ասաց Հովսեփյանը:

Նա համոզմունք հայտնեց, որ այն, ինչ կատարվել է այս երկու օրվա ընթացքում, իր իրավական գնահատականը ստանալու է. «Մենք սպասում ենք դրան: Եթե չստացավ իրավական գնահատական, ապա այլ մեխանիզմներով մենք կփորձենք հարցը լուծել»:

Փոխքաղաքապետը պատմեց, որ իրեն բերման ենթարկելիս չեն ասել՝ որն է պատճառը. «Ես երեկ՝ ժամը 18:00-ից հետո եմ իմացել՝ ինչի համար են բերման ենթարկել: Մինչև այդ ամեն ինչը հեքիաթային ֆիլմի էր նման, ոչ մեկ չէր ասում՝ ինչ է կատարվում իրականում»:

Անդրադառնալով իրեն առաջադրված մեղադրանքին՝ Հովսեփյանն այն անվանեց անհեթեթություն. «Հերթական խեղկատակությունն է, շոուն է, որը ցուցադրում է մեր իշխանությունը՝ փորձելով ուժի միջոցով ինչ-որ բան ճնշել: Սյունեցի տղամարդը պահելու է իր արժանապատվությունը»:

Նա պնդեց, որ քրեական գործը շինծու է. «Ես գիտեմ, որ բոլորին բաց են թողնելու, քանի որ գործը շինծու է, գործը կարելուց էլ գրագետ չի կարվել»:

Փոխքաղաքապետն անդրադառնալով իշխանության ներկայացուցիչների այն պնդումներին, որ Սյունիքում տեղի ունեցած ակցիաները որոշակի շրջանակներին սպասարկող մարդիկ էին կազմակերպել, ասաց. «Ուղղակի անհեթեթություն է, բացարձակ սուտ է: Նման խեղաթյուրված մտքերին ես անիմաստ եմ համարում պատասխանելը: Ի՞նչ են ուզում, այսինքն՝ գան ու մեղրեցին չխոսի՞, ի՞նչ եք անում»:

Անդրադառնալով իմքայլական Արմեն Խաչատրյանի այն դիտարկմանը, որ սյունեցիները չեն կարող խուլիգան լինել, Մենուա Հովսեփյանն արձագանքեց. «Ես «Իմ քայլից» սյունեցի պատգամավոր չեմ ճանաչում, որովհետեւ վերջին ժամանակներս իրենք իրենց սյունեցուն վայել չեն դրսևորում: Կարեն Համբարձումյանն էլ վերջերս հայտարարում էր, որ սյունեցուն միշտ էլ ապրել է ադրբեջանցիների հետ»:

Հիշեցնենք, որ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Դավիթ Բալայանի նախագահությամբ, այսօր՝ ապրիլի 23-ին, բավարարել է Գորիսի փոխքաղաքապետ Մենուա Հովսեփյանին ձերբակալելու մասին որոշման դեմ բողոքը՝ ոչ իրավաչափ ճանաչելով նրա ձերբակալությունը:

Հովսեփյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/640441.html>

**23.04.2021**

**«Ես ձու նետող չեմ, գրանատ նետող տղա եմ, մարտավարությունս դա է».**

**Շուռնուխի գյուղապետի եղբայրը դուրս եկավ ՔԿ-ից**

Սյունիքի մարզի Շուռնուխ համայնքի ղեկավար Հակոբ Արշակյանի եղբայրը՝ Աշխարհապետ անունով հայտնի Արարատ Աղաբեկյանը, քիչ առաջ դուրս եկավ Քննչական կոմիտեի շենքից:

Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 258-րդ հոդվածի 1-ին մասի (խուլիգանություն) հատկանիշներով:

Արարատ Աղաբեկյանը լրագրողների հետ զրույցում հայտնեց, որ իր նկատմամբ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

Անդրադառնալով իր առողջական վիճակին՝ Արարատ Աղաբեկյանն ասաց. «Հիմա նորմալ վիճակում եմ, շատ վատ վիճակում եմ եղել: Ինձ տնից հանել ու ապօրինի ձեռով բերման են ենթարկել, բերել-հասցրել այստեղ: Ես ոչ մի բանի հետ կապ չեմ ունեցել, ամենախայտառակ ձեռով են բերել: Այսքան ճանապարհ եմ անցել, այսքան մարտական



ուղիս, ստորացնելով ինձ բերել ու հասցրել են այստեղ: Ումն մի դեպուտատ ասել է, որ ստորացնելով, չոքեցնելով պիտի բերեն այստեղ, դրա համար ինքը պատասխան կտա այդ «պ...կը»: Նա ի՞նչ իրավունքով է ասել, որ ինձ ու մնացած տղաներին պատվից ցածր համարելով, զրկանքներով բերեն: Ես դեռ կբարձրաձայնեմ համապատասխան մարմիններին»:

Առաջադրված մեղադրանքի վերաբերյալ գյուղապետի եղբայրը նշեց, որ ինքը կապ չունի մեղսագրվող արարքի հետ. «Ոչ մի մեղադրանք չենք կարող դնել իմ վրա, ինչ էլ դրել են, լրիվ սուտ է: Ես 6 օր շարունակ իմ տանը բուժվել եմ, անգամ տնից դուրս չեմ եկել: Առավոտ շուտ եկել ու ինձ տնից հանել են: Դրա համար բոլորն էլ պատասխան կտան: Թքած ունեմ այս կառավարման վրա: Չգիտեմ՝ այս ապօրինությունները մինչեւ երբ են շարունակվելու: Այս խայտառակության պատասխանն ո՞վ է տալու, ո՞վ է մեզ պատասխանելու այսքան քաշքշելու համար»:

Նա շեշտեց, որ իրեն մեղավոր չի ճանաչում. «Ես մեղք չեմ գործել, ես մեղք գործող տղա չեմ: Ինչ-որ կապում են վրչոյի ավտոշարասյան հետ, որ ձու եմ նետել, ես ձու նետող տղա չեմ, ես գրանատ նետող տղա եմ, իմ մարտավարությունը դա է: Ես կատու չեմ իրենց նման, որ գիշերվա կես գամ, մտնեմ գյուղացու տունը, խաչագողի նման: Գիշերով գյուղ չեն գնում, մարդու տուն չեն գնում: Մտել է գյուղացու տունը, գյուղացին ասում է՝ հարգալիք հյուր չես, վնդում է տնից, նորից են մտնում: Երեխեքն էլ վախենում են, թե թուրքերն են շրջապատել»:

Հարցին՝ Քննչական կոմիտեում ի վերջո շտապ օգնություն կանչե՞լ են, իրեն բժշկական օգնություն ցուցաբերե՞լ են, Աղաբեկյանը պատմեց. «Մի բժիշկ է եկել, մի կապիկ, ներվերս կերավ, նոր բերեցին կորոնավիրուսի թեստ հանձնեցին, բուժումներս պատշաճ արել եմ, կորոնավիրուսն իմ մեջ սպանել եմ: Դեռ թուլություն կա, համ չեմ զգում: Գիշերն էլ տարել, պահել են մեկուսարանում»:

Նա պատմեց, որ իրեն հիվանդանոց չեն տարել, Քննչական կոմիտեում են թեստավորել:

«Մյունիքը ուզում են տալ, մենք էլ չենք թողում ու չենք էլ թողելու: Ես այսօր այստեղ եմ, բայց կինս, երեխաներս, եղբայրներս այնտեղ են ու չեն տալու: Որ դեպուտատն էլ պաշտոնապես հայտարարում է՝ պիտի ստորացնելով բերեն, բիգուձին, այդ «պ...կը» ո՞նց է այդպես ասում: 3 պատերազմ անցած տղա եմ, էստեղ դիվերսանտի նման մեջքը կռացրած են բերում, պատասխան են տալու», - ասաց Հակոբ Արշակյանի եղբայրը:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/640441.html>

**23.04.2021**

### **Մյունիքի մարզում տեղի ունեցած միջադեպի գործով մեղադրանք է առաջադրվել 19 անձի**

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական գործով իրականացված մեծածավալ քննչական և դատավարական այլ գործողությունների արդյունքում պարզվել են 2021թ. ապրիլի 21-ին Մյունիքի մարզ ՀՀ վարչապետի այցելության ժամանակ տեղի ունեցած խուլիգանության և իշխանության ներկայացուցիչների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերի մի շարք հանգամանքներ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնից, քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Մեղրի համայնքի ղեկավարը, 2021թ. ապրիլի 21-ին տեղեկանալով ՀՀ վարչապետի կողմից Սյունիքի մարզի Մեղրի և Ագարակ համայնքներ այց կատարելու մասին, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու դիտավորությամբ, քաղաքապետարանի մի խումբ աշխատակիցների, իրեն և իր մտերիմներին պատկանող մի շարք ընկերությունների աշխատակիցների և իր մերձավոր շրջապատի մի խումբ անձանց, Մեղրի և Ագարակ համայնքների մի շարք բնակիչների մասնակցությամբ կազմակերպել և ղեկավարել է նրանց կողմից կատարված խուլիգանական գործողությունները:

«Մասնավորապես, երբ ՀՀ վարչապետը փորձել է հանդիպումներ, շփումներ ունենալ նշված քաղաքների բնակիչների հետ, որն ուղեկցվել է լրատվամիջոցներով ուղիղ հեռարձակմամբ, Մեղրի համայնքի ղեկավարը համակարգել է խուլիգանություն կատարող անձանց գործողությունները, որի արդյունքում նշված անձինք բացահայտ անհարգալից վերաբերմունք ու անթաքույց արհամարհանք դրսևորելով շրջապատի նկատմամբ, հրապարակայնորեն հայհոյանքներ են հնչեցրել, ինչպես նաև խոչընդոտել են ՀՀ Վարչապետի և նրան ուղեկցող անձանց տեղաշարժն ու հանդիպումը բնակչության հետ՝ առաջացնելով իրարանցում և քաշքշուկ: Այդ ընթացքում խուլիգանություն կատարող անձինք չեն ենթարկվել իրավապահ մարմինների ծառայողների օրինական պահանջներին, այլ դիմադրություն ցույց տալով՝ հրմշտել, քաշքշուկ և հարվածներ են հասցրել նրանց», - ասվում է հաղորդագրության մեջ:

Ըստ աղբյուրի՝ նույն օրը Գորիս համայնքի ղեկավարի տեղակալը, տեղեկանալով ՀՀ վարչապետի կողմից Սյունիքի մարզի Մեղրի և Ագարակ քաղաքներ կատարած այցի, Մեղրի համայնքի ղեկավարի կազմակերպմամբ կատարված վերոնշյալ գործողությունների, ինչպես նաև՝ ՀՀ վարչապետի կողմից Երևան վերադառնալու մասին, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելու դիտավորությամբ, մի խումբ անձանց մասնակցությամբ կազմակերպել և ղեկավարել է խուլիգանական գործողություններ, որոնց ընթացքում ՀՀ վարչապետի ավտոշարասյան տեղաշարժի ժամանակ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով շրջապատի նկատմամբ, հրապարակայնորեն հայհոյանքներ են հնչեցրել, խոչընդոտել մայրուղու երթևեկությանը և ձվեր նետել նույն ավտոշարասյան ուղղությամբ:

ՀՀ քննչական կոմիտեից հայտնում են, որ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 19 անձի մեղադրանք է առաջադրվել, որոնցից 9-ին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ, 10-ին՝ 258-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Մեղադրյալներից 8-ի նկատմամբ խափանման միջոցը կալանավորում ընտրելու համար միջնորդություններ են ներկայացվել դատարան:

Նախաքննությունը շարունակվում է:

*Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

Աղբյուրը՝ <https://www.azatutyun.am/a/31219495.html>

## Լևոն Տեր-Պետրոսյան. Սադիզմի լպիրշագույն դրսևորում

Ինձ համար Փաշինյանի Սյունյաց արշավանքի ամենանողկալի դրվագը ուշ երեկոյան, առանց թույլտվության, նրա ներխուժումն էր շուռնուխեցի մի կնոջ բնակարան: Ավելի նվաստացուցիչ վիճակում չէի ուզի տեսնել երկրիս վարչապետին, որի պատկերացումը քաղաքացու իրավունքների մասին, ցավոք, չի տարբերվում ճորտատիրոջ պատկերացումից:

Աղբյուրը՝ <https://hetq.am/hy/article/129973>

**22.04.2021**

### **Շուռնուխ համայնքի ղեկավարի եղբորը տեղափոխեցին հիվանդանոց. նրա թոքերը 40% ախտահարված են. Ռ.Հայրապետյան**

Խոշտանգումներով բերման ենթարկված շուռնուխեցուն տեղափոխեցին հիվանդանոց: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է իրավաբան Ռոբերտ Հայրապետյանը:

«Նրա ինքնազգացողությունը կտրուկ վատացել է, թոքերը 40% ախտահարված վիճակում են գտնվում», - նշել է նա:

Ավելի վաղ [NEWS.am](https://news.am)-ին հայտնի էր դարձել, որ կարմիր բերետավորներն այսօր՝ առավոտյան ժամը 7:00-ին, տան մուտքի մոտից բերման են ենթարկել Շուռնուխ վարչական շրջանի բնակիչ Արարատ Աղաբեկյանին: Նրա տունը նույնպես անցնում էր հակառակորդին, եւ նա սեփական ձեռքերով այրել էր իր տունը:

Արարատ Աղաբեկյանին այսօր ուժով բերման են ենթարկել Քննչական կոմիտե: Այդ մասին [NEWS.am](https://news.am)-ին տեսանյութ էր տրամադրել փաստաբան Գայանե Պապոյանը: Տեսանյութում երևում է, թե ինչպես է քաղաքացին հեւիհեւ խնդրում, որ շտապ օգնություն կանչեն, քանի որ իրեն վատ է զգում. «Ես ինչ կապ ունեմ էս ամեն ինչի հետ, հիվանդ, 7 օր տաքությունով, թոքաբորբով պառկած եմ եղել, քաշ են տվել եւ բերել են այստեղ, խնդրում եմ՝ շտապ օգնություն կանչեք: Ես մեռնում եմ, դեղերս մոտս չի, վրաս վիճակ չկա»:

Նա հայտնեց, որ այսօր պիտի գնար կորոնավիրուսի թեստ հանձնելու:

Քննչական կոմիտեի սենյակում գտնվող իրավապաշտպանի հորդորով նրա ձեռքերը ազատ արձակեցին: Նշենք, որ Արարատ Աղաբեկյանը Շուռնուխ համայնքի ղեկավարի եղբայրն է:

Աղբյուրը՝ <https://news.am/arm/news/640216.html>

**22.04.2021**

### **Գորիսի փոխքաղաքապետի պաշտպանը ՀՔԾ հաղորդում է ներկայացրել՝ Մենուա Հովսեփյանին ապօրինի բերման ենթարկելու ու մարմնական վնասվածքներ պատճառելու մասին**

Գորիսի փոխհամայնքապետ Մենուա Հովսեփյանի շահերի պաշտպան Դավիթ Կարապետյանը ՀՔԾ հաղորդում է ներկայացրել:

Այս մասին Tert.am-ը տեղեկանում է Հատուկ քննչական ծառայությունից:

Պաշտպանը հայտնել է, որ Հովսեփյանին ապօրինի բերման են ենթարկել ՀՀ քննչական կոմիտե, որտեղ ենթադրաբար ղեկավար աշխատակիցներից մեկի հրահանգով պատճառվել են մարմնական վնասվածքներ:

Աղբյուրը՝ <https://www.tert.am/am/news/2021/04/22/Menua-hovsepyan/3591758>

**21.04.2021**

**Սյունիքի մարզում տեղի ունեցած միջադեպի առթիվ հարուցվել է քրեական գործ**

Սյունիքի մարզում Նիկոլ Փաշինյանի դեմ իրականացված ակցիաների կապակցությամբ ՀՀ ոստիկանությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի (Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) և 258-րդ հոդվածի 3-րդ մասի (Խուլիգանություն) հատկանիշներով: Այս մասին լրատվամիջոցներին հայտնել է ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժնի պետ Արևիկ Խաչատրյանը: Քրեական գործի նյութերը ոստիկանությունից ըստ ընթացակարգի ուղարկվել են Քննչական կոմիտե:

Հիշեցնենք, վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Սյունիքի մարզ այցի ժամանակ տեղի էր ունեցել միջադեպ, երբ մի խումբ անձինք փորձել են խափանել Կառավարության ղեկավարի հանդիպումը քաղաքացիների հետ:

Աղբյուրը՝

<https://www.1lurer.am/hy/2021/04/21/%D5%8D%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%B8%D6%82%D5%B4-%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%A1%D5%AE-%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A4%D5%A5%D5%BA%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%A9%D5%AB%D5%BE-%D5%B0%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D6%81%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%A7-%D6%84%D6%80%D5%A5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%9D-%D5%AD%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%A3%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB%D5%B7%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D5%BE/459647>

**16.04.2021**

**Մեղրիի ենթադրյալ միջանցքի շնորհիվ Սյունիքի երկաթուղային ճանապարհների վերագործարկման շահավետության գաղափարը միջ է, ուղեղային մորմոք եւ մեծ սուտ**

Մեղրու ենթադրյալ միջանցքին առնչվող հարցերին (կապիտուլյացիայից հետո) անդրադարձել ենք քանիցս: Եվ դեռ անդրադառնալու ենք, քանզի Մեղրիով թուրքին միջանցք տրամադրելը Սյունիքի անդամահատում է նշանակում, ինչպես էլ Մեղրիի տարածաշրջանում հայոց ինքնիշխանության զրոյացում, հայոց հարավային ու միակ դուռը թշնամի տերություններին և վիրաբերում:

Եվ որպեսզի հայրենադրության այդ գաղափարը կյանքի կոչվի առանց պյունեցիների դիմադրության, ինչ-որ ծնծղաներ՝ թուրքի սպասավոր դարձած, փորձում են Սյունիքում կարոտախոս բորբոքել երկրամասի երբեմնի երկաթուղային հնարավորությունների օգտակարության հանդեպ: Փորձու

մ են պատրանք հյուսել՝ կապված Մինջեւան-Կապան եւ Մինջեւան-Մեղրի-Ջուլֆա երկաթգծերի հնարավոր վերագործարկման եւ դրանից բխող շահավետության հետ: Ու այդ ամենի արդյունքում «պահանջված համարել» Մեղրիի միջանցքի ստեղծումը...

Չափազանց կարեւոր այդ հարցի վերաբերյալ Սյունիքում կա հստակ դիրքորոշում, որը կուզենայինք ներկայացնել:

\*\*\*

Սյունիքում, անշուշտ, չեն մոռացել, որ հատկապես երկաթուղային ճանապարհների շնորհիվ է խորհրդային տարիներին երկրամասի տնտեսությունն աննախադեպ զարգացում ապրել:

Մի քանի փաստ՝ ահավասիկ:

**Առաջին.** Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-45թթ.) կառուցվեց Ջուլֆա-Մինջեւան երկաթուղին, որով կապ հաստատվեց Մեղրու տարածաշրջանի եւ Երեւանի միջեւ (Մասիս-Ջուլֆա եւ Մասիս-Երեւան երկաթուղիները կառուցվել էին դեռեւս 1902-ին):

Ասել է թե՛ Մեծ հայրենականի տարիներից սկսած Երեւան-Բաքու երկաթուղային կապն իրականացվել է Մեղրիի տարածքով:

Ե՛վ պատերազմի տարիներին, ե՛ւ հետո այդ երկաթուղին մեծ դեր է խաղացել Մեղրիի տնտեսության կազմակերպման եւ զարգացման գործում:

Երջանկահիշատակ Դավիթ Մաթեւոսյանն էր ասում՝ երկաթուղու գործունեության վերջին տարիներին յուրաքանչյուր ուղղությամբ այդ երկաթգծով օրական անցնում էր 20-23 շարժակազմ. ամեն մի շարժակազմի բեռնավորված վագոնների նվազագույն քանակը 50-ից ավելի էր:

Մյուս կողմից՝ այդ երկաթգծի շնորհիվ մեղրեցին կարողանում էր հնարավորինս արագ եւ առանց դժվարությունների կապ պահպանել Հայաստանի կենտրոնական շրջանների հետ:

**Երկրորդ.** Մինջեւան-Ղափան երկաթուղին գործարկվեց 1932 թվականին:

Այդ երկաթուղու շնորհիվ Կապանը խորհրդային տարիներին դարձավ Հայաստանի հարավ-արեւելյան տարածաշրջանի ամենախոշոր եւ ժամանակակից քաղաքը:

Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ շրջանի ժողովրդատնտեսական բեռների մոտ 95%-ը Ղափան էր ներկրվում երկաթուղային տրանսպորտով:

Տարբեր նշանակության բեռներ էին տեղափոխվում Գորիսի ու Սիսիանի շրջանների համար:

Ղափանի երկաթուղային կայարանի միջոցով իրականացվող բեռնափոխադրումների ծավալի մասին պատկերացում կազմելու համար բերենք մեկ օրինակ՝ 1986 թ. 1-ին կիսամյակում առաքվել է 3041 վագոն, սպառող կազմակերպություններին են առաքվել 34680 տոննա ժողովրդատնտեսական բեռներ:

Իսկ ուղեւորափոխադրումները... Ըստ Վահրամ Օրբելյանի՝ «Միջին եւ ավագ սերնդի մարդկանց հիշողության մեջ տակավին թարմ է մնացել երկաթուղային կայարանի աշխույժ եռուզեռն առավոտվա (երբ գնացքը ժամանում էր Կապան) եւ երեկոյան (երբ գնացքը մեկնում էր մայրաքաղաք) ժամերին եւ վագոնների ու ռելսերի բախումից առաջացած համաչափ գնզգնզոցը...»:

\*\*\*

Մեղրու եւ Կապանի երկաթուղային կայարանների գործունեությունն արտացոլող (վերոնշյալ) փաստերը բավական են՝ համոզվելու, որ Սյունիքն ընդգրկող շրջանների կյանքն այդ ժամանակ առանց երկաթուղային տրանսպորտի հնարավոր չէր պատկերացնել:

Եվ ուրեմն՝ որեւէ մեկը չի պատրաստվում հերքել կամ հարցականի տակ դնել պատմական այդ իրողության ճշմարտացիությունը, սակայն...

Մեղրու եւ Կապանի երկաթուղային կայարանների գործունեությունը, Սյունիքի երբեմնի երկաթուղային ճանապարհներն ընդամենը հուշ են, գեղեցիկ հուշ...

Եվ գեղեցիկ այդ հուշը տվյալ ժամանակաշրջանում իրականություն է եղել բացառապես այն հանգամանքի շնորհիվ, որ է՛լ Հայաստանը, է՛լ Ադրբեջանը միեւնույն պետության՝ Խորհրդային Միության մեջ էին: Ու սյունիքյան երկաթուղիները մեկ պետության միասնական երկաթուղային ցանցի փոքրիկ բաղադրիչն էին...

Եվ երբ 1991-ին փլուզվեց Խորհրդային Միությունը, փլուզվեց նաեւ երկաթուղային միասնական ցանցը, այդ թվում՝ դադարեցին գործել Սյունիքի երկաթուղային ճանապարհները:

Ավելին, երկաթուղային այդ ճանապարհները որոշ ժամանակ լրջագույն խնդիրներ էին առաջացնում Սյունիքում:

Այսպես՝ Նախիջեւանով եւ Զանգելանով անցնող Կապան-Երեւան եւ Երեւան-Կապան գնացքները պարբերաբար ենթարկվում էին հարձակումների, թալանվում էին ապրանքատար գնացքները:

1991-ի սեպտեմբերին ադրբեջանցիները դիմեցին ծայրահեղ ստորության՝ կանգնեցնելով Կապան-Երեւան գնացքը՝ պատանդ վերցրին 14 հոգու եւ գերության մեջ պահեցին 35 օր:

Նման դեպքեր պատահել են մի քանի անգամ...

Գրեթե նույն վիճակն էր երկաթուղու Մեղրու հատվածում: Ըստ Դավիթ Մաթեոսյանի՝ 1992-ի սկզբին Նախիջեւանում պարբերաբար զավթում էին հայկական բեռները:

Նույն տարվա ամռանը Մինջեւանում մնացած իրանական բեռները, որ պետք է Մեղրիով տեղափոխվեին Զուլֆա, ադրբեջանցիների կողմից թալանվեցին...

Անշուշտ, ոմանք կարող են մեզ հակադարձել՝ ասելով՝ դե 1990-ականների սկզբում պատերազմ էր, ուրիշ բան չէր էլ կարելի սպասել ադրբեջանցիներից:

Եվ, ի պատասխան նման մտածելակերպ ունեցողների, նոր հարցեր են ծագում. իսկ հիմա պատերազմն ավարտվե՞լ է, իսադող գոյակցության պայմաննե՞ր են ստեղծվել, հայ-ադրբեջանական թշնամա՞նքն է պակասել...

Այդ հարցերը մտահոգող պատասխան ունեն. հիմա Սյունիքի հանդեպ նոր սպառնալիքների ու մարտահրավերների հետ գործ ունենք: Հիմա է՛լ Թուրքիայի, է՛լ Ադրբեջանի ղեկավարները բացահայտ հավակնություններ ունեն Սյունիքի հանդեպ՝ մեր երկրամասը համարելով Ադրբեջանի պատմական տարածք: Ու այդպես՝ գրեթե ամեն օր...

Եվ ուրեմն՝ փորձենք առերեսվել իրականության հետ. Սյունիքի երկաթուղային երբեմնի ճանապարհները (նախկին տեսքով) վերագործարկելու դեպքում մենք՝ արդեն իսկ խոցված, վիրավորված Սյունիքը կփռենք թուրք-ազերիների ոտքերի տակ...

Պատմագիտությունը շատ հետաքրքիր է գրեթե անսակարկելի մի սկզբունք ունի՝ մեթոդաբանական սկզբունք՝ ամեն ինչ դիտարկել տվյալ ժամանակի մեջ:

Ուրեմն եւ՝ Մինջեւան-Կապան եւ Մինջեւան-Մեղրի-Ջուլֆա երկաթգծերի երբեմնի պահանջված ու շահավետ գործունեությունը պետք է դիտարկել բացառապես Խորհրդային Միության օրերի տրամաբանության մեջ, պատմական ասպարեզից վերացած-հեռացած, այլևս գոյություն չունեցող պետության տրամաբանության մեջ:

Եվ խորհրդային տարիների իրողություններով, չափանիշներով այդ երկաթգծերի մասին այսօր՝ 2021 թվականին, դատողություններ անել, երազանքներ կառուցել՝ առնվազն անլրջություն է, եթե ոչ զառանցանք ու մոլորություն, ինքնախաբեություն:

Այդ բոլորով հանդերձ՝ եկեք միասին մի պահ թեւ առնենք ու տեղափոխվենք փափագելի անուրջների գիրկը, ընդունենք, որ վերագործարկվել են Մինջեւան-Կապան եւ Մինջեւան-Մեղրի-Ջուլֆա երկաթգծերը:

Կա՞ Հայաստանում մեկ պաշտոնյա կամ քաղաքական ուժ, որ կերաշխավորեր այդ երկաթուղիների անվտանգ գործունեությունը:

Կա՞ Հայաստանում մեկ պաշտոնյա կամ քաղաքական ուժ, որ կապացուցեր՝ այդ երկաթգծերն ավելի դյուրին չեն դարձրել թուրք-ազերիների կողմից ընդդեմ Հայաստանի կամ Սյունիքի պատերազմ սանձազերծելու հնարավորությունը:

Կա՞ Հայաստանում մեկ պաշտոնյա կամ քաղաքական ուժ, որ ի վիճակի կլինի գործնականում խաչ դնել Ադրբեջանի եւ Թուրքիայի սյունիքյան նկրտումներին, որ լսում ենք անընդհատ, բայց վախենում ենք հակադարձել:

\*\*\*

Վերոնշյալ դիտարկումները, սակայն, թող տպավորություն չստեղծեն, թե դեմ ենք Սյունիքն աշխարհին կապող երկաթուղային ճանապարհներ ունենալուն:

Ընդհակառակը՝ մեր դիտարկումներն ուղղակիորեն հաստատում են սյունիքյան երկաթուղիներ ունենալու տեղացիներիս երազանքը, բայց պայմանով՝ սյունիքյան երկաթուղիները ոչ մի պարագայում եւ ոչ մի գնի դիմաց չպետք է կախված լինեն Ադրբեջանից:

Եվ թող զարմանք չառաջացնի, եթե ասենք՝ սյունիքյան երկաթուղային ցանց ունենալու (առանց Ադրբեջանից կախվածության) գաղափարի հեղինակները մեր ավագ սերնդի փառահեղ ներկայացուցիչներն են: Հենց նրանք էլ հիմնավորել են այդ գաղափարի հրատապությունն ու կենսունակությունը:

Կարեն Դեմիրճյանը դեռես տասնամյակներ առաջ հրապարակ բերեց եւ խորհրդային էպոխայի վերջին հնգամյակի ծրագրում ամրագրեց հանրապետության կենտրոնը Ջերմուկ քաղաքի հետ երկաթգծով կապելու գաղափարը, որտեղից էլ երկաթգիծը պիտի հասներ Միսիան, ապա՝ մի ուղղությամբ՝ Կապան-Քաջարան-Մեղրի, մեկ այլ ուղղությամբ՝ Գորիս-Արցախ:

Իհարկե, բավականին հավակնոտ այդ ծրագիրը նախագծային լուրջ քննարկումների տեղիք սովեց. ինչպե՞ս երկաթգիծը հասցնել Ջերմուկ...

Նախ առաջ քաշվեց Վարդենիս-Ջերմուկ տարբերակը, որը հետագայում խելամիտ չհամարվեց:

Հետո առաջ քաշվեց Մարտունի-Ջերմուկ տարբերակը. դա նույնպես ոչ նպատակահարմար համարվեց:

Հետո առաջ քաշվեց Երեւան-Վեդի-Վայք-Սիսիան-Դաստակերտ-Քիրս-Կապան երկաթգծի տարբերակը, ինչի արդյունքում Սյունիքը (Հրազդան-Իջեւան երկաթգծով) կկապվեր Հայաստանի հյուսիսի հետ, այնտեղից՝ Իջեւան-Աղստաֆա երկաթգծով՝ Ադրբեջանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հետ: Ընդ որում՝ այդ ծրագրով երկաթգծի մի ճյուղը կձգվեր դեպի Ջերմուկ, մյուսը՝ դեպի Քաջարան...

Անկախության տարիներին Սյունիքում երկաթուղային ցանց ստեղծելու գաղափարը նոր զարգացում ապրեց:

Խնդիր դրվեց կառուցել Ագարակից դեպի իրանական Մերենդ 110 կմ երկարությամբ երկաթգիծը, որը Հայաստանը կկապեր Միջին Ասիա-Թուրքիա-Եվրոպա երկաթգծին:

Մեկ ուրիշ ծրագրի մասին. դեռեւս 2007-ին ձեռք բերվեց Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման պայամանավորվածություն: Նախնական հաշվարկներով՝ երկաթգծի երկարությունը լինելու է 470 կմ, որից 60 կմ-ը՝ Իրանի, 410 կմ-ը՝ ՀՀ տարածքում: Այդ երկաթգիծը, բնականաբար, կանցնի Սյունիքի տարածքով եւ կհասնի Գագարին կայարան (Գեղարքունիքի մարզ):

Ինչպես տեսնում ենք, առկա բոլոր ծրագրերը շրջանցում են Ադրբեջանի տարածքը:

\*\*\*

Ամփոփենք շարադրվածը...

Մինջեւան-Կապան երկաթուղու վերականգնումը (այն էլ՝ չգիտենք, թե ում միջոցներով) միջ է:

Ոչ պակաս սուտ է Մինջեւան-Մեղրի-Ջուլֆա երկաթգծի կառուցումը (այս դեպքում եւս չգիտենք, թե ում միջոցներով):

Այդ երկաթգծերը կարող էին լինել ու գործել միայն ԽՍՀՄ անվանումով պետության պարագայում, որ այլեւս չկա ու չի լինելու:

Հիմա այդ երկաթգծերին առնչվող տարածքները երկու պետության մեջ են՝ Հայաստանի եւ Ադրբեջանի. ընդ որում՝ վերջինս (շարունակում ենք կրկնել) գրեթե ամեն օր տարածքային հավակնություններ է ներկայացնում Հայաստանի հանդեպ եւ Սյունիք-Չանգեզուրը համարում Ադրբեջանի պատմական տարածք:

Վերականգնել Մինջեւան-Կապան եւ Մինջեւան-Մեղրի-Ջուլֆա երկաթգծերը (ինչ պատրվակով ու խոստումներով էլ համեմվի)՝ նշանակում է կանաչ լույս վառել դեպի Սյունիք ձգտող թուրքի ճանապարհին...

Այդ ամենի փոխարեն՝ որդեգրել Սյունիքում երկաթուղու նոր ցանց ստեղծելու ազգային գաղափարը, որը կապ չի ունենա Ադրբեջանի հետ, որը մի նոր աստիճանի կբարձրացնի Հայաստանի ազգային անվտանգությունն ու միջազգային վարկանիշը, որն ավելի արդյունավետ եւ հուսալի կդարձնի կապն աշխարհի հետ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/mekhrii-entadryal-mijantsqi-shnorhiv-syuniqi-erkatukhayin-chanaparhneri-veragortsarkman-shahavetutyany-gakhapary-mif-e-ukhekhayin-mormoq-e%D6%82-mets-sut>

**12.04.2021**



**Երեւանի ընդհանուր իրավասության դատարանն ուժից դուրս է հայտարարել Սահմանադրության 42-րդ հոդվածը՝ խոսքի ազատության մասին, եթե խոսքը վերաբերում է Քաջարանում գործող թիվ 1 ասպատակին**

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը (հայցի ապահովման միջոց կիրառելու պատրվակով) ընդունել է որոշում, որով արգելել է «Սյունյաց երկիր» լրատվամիջոցին՝ որեւէ տեղեկություն տարածել 2014 թվականից Քաջարան ներխուժած թիվ 1 ասպատակի մասին՝ մինչեւ տվյալ քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Սա երկրորդ դեպքն է, երբ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը քաջարանյան ավազակախմբի անդամի վերաբերյալ որեւէ կարծիք հայտնելը, գնահատողական դատողություն անելն արգելանքի տակ է դնում:

Փաստորեն՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, առաջնորդվելով բացառապէս Քաջարան ներխուժած ավազակախմբի ֆինանսական շահերով, չոքել նրանց առաջ եւ միացել Սյունիքում խոսքի ազատության դեմ հայտարարված պատերազմին...

Դե իսկ, անկեղծ լինենք, Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանից ուրիշ բան չէինք էլ սպասում...

Որքանով տեղյակ ենք՝ Կապանի երբեմնի ոչ բարեհամբավ դատախազ Արթուրն է (լուսանկարում) այնտեղ նախագահում, եւ դրանով ամեն ինչ ասված է...

Այդքանով հանդերձ՝ «Սյունյաց երկիրը» մտադիր չէ իր լսարանին անհաղորդ դարձնել այն ամենին, ինչ կատարում են հայտնի հանքատերերը՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության եւ հայ ժողովրդի:

Ճիշտ է, հավատարիմ կմնանք դատարանի որոշմանը եւ մեր հրապարակումներում ժամանակավորապէս չենք օգտագործի այդ ստահակի անուն-ազգանունը:

Նրա անվան փոխարեն կօգտագործենք այն պիտակը, որով նրան ավանդաբար կոչում են այս կողմերում՝ Փալասյան, իսկ ավելի ճիշտ՝ Քաջարանի թիվ 1 ասպատակ...

Ու թող որեւէ մեկը չկասկածի՝ Սյունիքի սրբազան հողն այսուհետ նույնպէս վառվելու է այստեղ ներխուժած սելջուկների ոտքերի տակ: Եվ Երեւանի ծնկաչոք դատավորները չեն կարողանալու փրկել նրանց...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/ere%D6%82ani-yndhanur-iravasutyany-datarann-uzhits-durs-e-haytararel-sahmanadrutyany-42-rd-hodvatsy-khosqi-azatutyany-masin-ete-khosqy-veraberum-e-qajaranum-gortsokh-tiv-1-aspatakin>

**08.04.2021**

**Լինելիության բանաձեւը. երբ Սյունիքն այլեւս այն չէ, ինչ էր կապիտուլյացիայից առաջ**

Հինգ ամիս առաջ լույս աշխարհ եկած հայտնի կապիտուլյացիոն ակտը, գոնէ այս փուլում, վերջ դրեց Արցախյան 44-օրյա պատերազմին...

Սակայն թնդանոթների լռությունը տարածաշրջանին չբերեց որոշակիություն, հուսալի կայունություն եւ կանխատեսելի ապագա: Ընդհակառակը՝ Արցախի համար թուրք-

ագերիների պայքարը փոխարինվեց Սյունիքի համար պայքարով, որն այս փուլում ընթանում է անաղմուկ, սողացող դրսևորումներով...

Այո, այստեղ առայժմ թնդանոթները չեն որոտում, բայց աստիճանաբար ու հետետողականորեն լուծվում են այն հարցերը (ի վնաս Հայաստանի), որոնք սովորաբար լուծվում են մարտադաշտում...

\*\*\*

Մի քանի օր առաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հերթական անգամ Ջանգեզուրին առնչվող պահանջներ ներկայացրեց՝ մեր երկրամասն անվանելով «Ադրբեջանի հինավուրց հող»:

Նրա խոսքով՝ «...Ակտիվ աշխատանքներ են տարվում Ջանգեզուրի միջանցքի հետ կապված:

Այժմ Ադրբեջանի հինավուրց հողը՝ Ջանգեզուրը, թյուրքական աշխարհը միավորելու դեր կկատարի: Քանի որ տրանսպորտային, հաղորդակցական, ենթակառուցվածքային նախագծերը, որոնք անցնում են Ջանգեզուրով, կմիավորեն ամբողջ թյուրքական աշխարհը, ինչպես նաև լրացուցիչ հնարավորություններ կստեղծեն այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի համար:

...Ադրբեջանն արդեն տվել է այդ աշխատանքների մեկնարկը: Վստահ եմ, որ գործընկեր երկրները նույնպես կօգտվեն այս հնարավորությունից:

...Այժմ չկա «Լեռնային Ղարաբաղ» կոչվող տարածքային միավորը: Ադրբեջանը լուծել է այս հարցը, հասել է պատմական հաղթանակի եւ սկսել է վերականգնման աշխատանքներն ավերված տարածքներում», -ասել է Ալիևը Թրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի ոչ պաշտոնական գագաթնաժողովում:

Ավելի վաղ նույնպես Իլհամ Ալիևն անդրադարձել է Սյունիք-Ջանգեզուրին, ինչը ներկայացրել էինք օրեր առաջ եւ տարակուսանք հայտնել, որ Հայաստանից որեւէ մեկը չի հակադարձում Ադրբեջանի նախագահին:

Ահա Ալիևի խոսքը Տնտեսական համագործակցության գագաթնաժողովում՝ «...Նոր միջանցքը, որ անցնելու է Ադրբեջանի պատմական տարածքով՝ Ջանգեզուրով, եւ Ադրբեջանի հիմնական մասը կապելու է Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության եւ Թուրքիայի հետ, տրանսպորտային ոլորտում նոր հնարավորություններ է ստեղծելու: Մենք հրավիրում ենք Տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ երկրներին՝ Ջանգեզուրի միջանցքը շահագործելու»:

Այսպես կոչված Ջանգեզուրի միջանցքին Ադրբեջանի նախագահն անդրադարձել է նաև «Նոր Ադրբեջան» կուսակցության 7-րդ համագումարում՝ «Հայաստանը ցանկանում է խանգարել Ջանգեզուրի միջանցքի ստեղծմանը, սակայն դա նրանց չի հաջողվի: Մենք նրանց կստիպենք: Պատերազմի հետեւանքներից մեկը, իհարկե, Ջանգեզուրի միջանցքն է, որն այսօր քննարկման առարկա է դարձել: Ջանգեզուրի միջանցքը պատմական նվաճում է: Այն փաստը, որ հարցն արտահայտված է եռակողմ հայտարարության մեջ՝ մեզ համար քաղաքական մեծ հաղթանակ է: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են տարվում Ջանգեզուրի միջանցքի գործունեության ուղղությամբ... եւ դա մեր հաջորդ պատմական հաջողությունը կլինի»:

\*\*\*

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանի նախագահը Սյունիքի մասին խոսում է այնպես, ինչպես կխոսեր, ասենք, Ադդամի Ֆիզուլիի, Ապշերոնի մասին...

Ցավոք, անպատասխան այդ խոսքերը բարբաջանք չեն սուկ, այլ...

Եվ որպեսզի գիտակցենք դրանց իրական նշանակությունն ու վտանգավորությունը, փորձենք համառոտ պատասխան տալ հարցին՝ իսկ ի՞նչ կատարվեց Սյունիքում 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո:

**Նախ**՝ ինչ-որ հուշագրի համաձայն, որ գաղտնագերծվեց հետագայում, 2020 թ. դեկտեմբերի 18-ին հայկական մարտական դիրքերը (վերին հրամանով) հետ քաշվեցին եւ տեղակայվեցին նախկին ԽՍՀՄ սահմանի երկարությամբ՝ մեզ համար ակնհայտորեն ոչ նպաստավոր տեղերում:

Դիրքային այդ փոփոխությունները տարակույսների տեղիք չէին տա, եթե 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 1-ին կետում ամրագրված չլիներ՝ **«Ադրբեջանի Հանրապետությունը եւ Հայաստանի Հանրապետությունը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում»:**

**Երկրորդ**՝ Սյունիք-Ադրբեջան արեւելյան սահմանի մի շարք հատվածներում կորցրեցինք այն սահմանը, որ ունեինք Խորհրդային Միության ժամանակներում:

Բազմաթիվ մարդիկ նույնիսկ իրենց սեփական հողատարածքներից զրկվեցին, որ ժամանակին ձեռք էին բերել գործող օրենքի համաձայն եւ որոնց համար երեք տասնամյակ շարունակ հողի հարկ վճարել:

**Երրորդ**՝ փաստորեն (գործնականում) այլեւս մեր լիարժեք հսկողության տակ չէ Գորիս-Կապան մայրուղին, որը ներկայումս կյանքի յուրօրինակ ճանապարհ է Սյունիքի համար:

Գորիսից Կապան (կամ հակառակը) գնալու համար անցնում ենք ադրբեջանական ութ մարտական դիրքի հայացքի ներքո: Դրանց հեռավորությունը մայրուղուց՝ որոշ դեպքերում 10-100 մ է: Իսկ թե քանի դիրքեր չեն երեւում արտաքուստ, բայց գտնվում են մայրուղու մերձակայքում, չգիտենք:

Ընդ որում՝ այդ դիրքերն այնպիսի իշխող տեղերում են, որ ցանկացած պահի կարող են արգելափակել մայրուղին:

**Չորրորդ**՝ Գորիս-Կապան ավտոմայրուղում պարբերաբար կարելի է ականատես լինել ադրբեջանական զինվորների տեղաշարժի՝ ՌԴ սահմանապահների մեքենայի առաջնորդությամբ:

Փաստորեն մեր ճանապարհով են ադրբեջանցի զինվորները հերթապահության գնում իրենց մարտական դիրքեր:

Ուշագրավ այլ իրողություն՝ եւս:

Վերջերս Չայգամիի տարածքով անցնելիս ականատես եղանք մի իրողության, որ ականա հիշեցինք Ստեփան Զորյանի հայտնի պատմվածքը՝ «Ջրհորի մոտ»: Հինգ-վեց ադրբեջանցի զինվոր՝ ջրի տարաներով, մեր զինվորներից մի քանի մետր հեռավորությամբ ձգվող ճանապարհով, գնում էին մեր աղբյուրից ջուր բերելու...

Լա՛վ է, թե՛ վատ՝ այլ հարց է:

**Հինգերորդ**՝ շրջանառության մեջ է դրվել (նաեւ հայոց խոնարհ ջանքերով) տեսակետը, թե իբր Գորիս-Դավիթ բեկ մայրուղին (21 կմ երկարությամբ) ամբողջապես անցնում է Ադրբեջանի տարածքով: Իրականում, մինչդեռ, մայրուղին միայն որոշ տեղերում է հատում

Աղբբեջանի տարածքը եւ կրկին մտնում Հայաստանի տարածք: Իսկ մենք ալարում ենք այդ ճանապարհահատվածներում տարբերանշաններ տեղակայել՝ տպավորություն ստեղծելով, որ մայրուղու 21 կմ-ոց հատվածն ամբողջապես անցնում է Աղբբեջանով՝ դրանից բխող հետեւանքներով:

**Վեցերորդ**՝ Սյունիքում հստակ տեղեկություններ չկան, թե ինչ վիճակում է երկրամասի հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան սահմանագիծը՝ Մեւ լճից, Մեծ Իշխանասարից մինչեւ Ծղուկ լեռ, մինչեւ Փոքր Ալ լիճ, այնուհետեւ մինչեւ Որոտան գետի ակունքներ:

Ճիշտ է, հիմա այնտեղ ձյուն է, բայց ամռանը Գորիսի եւ Սիսիանի տարածաշրջանների խոշոր ու մանր եղջերավոր անասունների մեծ մասը կտեղափոխվի ամառային այդ արոտներ: Եվ տվյալ տարածքներում սահմանագատումն էական նշանակություն է ունենալու: Անգամ խորհրդային տարիներին այդ վայրերում՝ արոտների համար, հայ-աղբբեջանական ընդհարումներ էին տեղի ունենում:

Իսկ միգուցե սահմանագատումն այնտեղ նույնպե՞ս ավարտված է:

**Յոթերորդ**՝ բոլորը՝ Մոսկվայից մինչեւ Անկարա, Բաքվից մինչեւ Երեւան խոսում են հաղորդակցության ուղիների ապաշրջափակման մասին, բայց որեւէ մեկը չի համարձակվում Իլհամին հարցնել՝ յոլդաշ, բա ինչո՞ւ ես արգելափակել Կապանից (Սյունիք գյուղով) Ագարակ, Եղվարդ եւ Ուժանիս տանող մայրուղին, որ անցնում է Սեիդլար գյուղով (խոսքը Կապանի տարածաշրջանի մի ամբողջ ենթաշրջանի շրջափակված լինելու մասին է):

**Ութերորդ**՝ իրավասու ատյանները հրաժարվում են շատ թե քիչ ամբողջական տեղեկություն ներկայացնել, թե Սյունիքի արեւելյան սահմանի երկարությամբ պաշտպանական ինչ համակարգ է գործում հիմա՝ մոռանալով, որ դա մարզի բնակչության համար մեծագույն հետաքրքրություն ներկայացնող հարց է՝ մոռանալով նաեւ, որ հավաստի տեղեկատվության բացակայությունը անորոշության սկիզբն է...

**Իններորդ**՝ շարունակվում է Սյունիքի արեւելյան սահմանների GPS-ային որոշումը: Միայն վերջին շաբաթվա ընթացքում մոտ 15 հա հողատարածք է Խոզնավարից անցել Լաչինի շրջանին (խորհրդային տարիներին այդ հանդամասը երբեք դուրս չի եղել Խոզնավարի տարածքից):

Նման կեղծ սահմանորոշման հետեւանքով Վաղատուր գյուղը նույնպես դարձել է սահմանամերձ, որ երբեք այդպիսին չի եղել...

**Տասներորդ**՝ Սյունիքը տնտեսական ահռելի կորուստ է կրել հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որի ընդհանուր ծավալները դեռեւս հաշվարկված չեն:

Առերեւոյթ մի բան է ակնհայտ՝ սահմանային գրեթե բոլոր գյուղերում խնդիրներ են առաջացել է՛ւ անասնապահության, է՛ւ դաշտավարության, է՛ւ ջրօգտագործման ոլորտներում:

**Տասնմեկերորդ**՝ Շուռնուխում եւ Որոտանում բազմաթիվ բնակելի տներ են անցել Աղբբեջանի տիրապետության ներքո:

\*\*\*

Օգտվելով Հայոց պետությանն ու պետականությանը համակած անօրինակ ճգնաժամից, մեր ինքնիշխանության՝ նվազագույն նիշին հասած վիճակից՝ Աղբբեջանն օրակարգային հարց է դարձրել Մեղրիի միջանցքի ստեղծումը...

Ընդ որում՝ դա եղել է Քեմալի երազանքը 1920-ականներին. մեր արժանապատիվ նախնիները մերժել են այդ ցնորամտությունը:

Դա եղել է կոմունիստական Ադրբեջանի երազանքը. Կարեն Դեմիրճյան փառահեղ առաջնորդը թքել է նրանց ճակատին:

Անգամ Գրիգոր Հարությունյան առաջնորդն է ստալինյան օրերում համարձակվել դեմ գնալ Մեղրիի միջանցքի բացմանը:

Հիմա թուրք-ազերիները, կարծեք, ի կատար են ածում իրենց դարավոր երազանքը, ինչի վկայությունն Ադրբեջանի նախագահի պերմանենտ հայտարարություններն են, որ ներկայացրին սույն հրապարակման սկզբում:

Տեսնենք, թե ինչ ընթացք կունենա Մեղրիի միջանցքի ստեղծման համար բարձրացված համաշխարհային մրկահողմը...

Մյուս կողմից՝ տեղեկատվական դաշտում անընդհատ լուրեր են շրջանառվում Սյունիքի շուրջ թշնամական երկրների զինուժի կուտակումների մասին:

\*\*\*

Հայաստանի գործող իշխանությունը, օրվա վարչապետի գլխավորությամբ, ոչ միայն ոչինչ չարեց Սյունիքի սողացող անեքսիան կասեցնելու համար, այլև իր լռությամբ, ինչ-ինչ թաքուն պայմանավորվածություններով (բացահայտված հուշագիրը՝ ահավասիկ) նպաստել է նպաստում է դրան...

Ոչ իշխանական դաշտում նույնպես չգտնվեց քաղաքական մի ուժ կամ գործիչ, որ կոնկրետ գործողություններով կկարողանար շատ թե քիչ հակազդել Սյունիքի դեմ թեւածող կամայականություններին:

Ընդ որում՝ գրեթե բոլորն ամեն օր (իրար հերթ չտալով) խոսում են Սյունիքի մասին, բայց ոչ մի արդյունք, ոչ մի դրական տեղաշարժ... Խոսելու առումով իսկական մրցույթ է. կարելու է, թե ով առաջինը ֆեյսբուքյան գրառմամբ, օրինակ, կազդարարի Շուռնուխի կովերը գողանալու մասին: Իսկ եթե մի քանի օր կովերի գողություն չի լինում, ապա մեկ այլ գրառմամբ անցյալ տարվա դեկտեմբերին Թուրուսի խուրի շուրջ (Արավուս) տեղի ունեցածը հրամցվում է իբրեւ 2021 թ. մարտյան իրադարձություն...

Ազգային ժողովում էլ չկա մի ուժ կամ խմբակցություն, որ սեփական ամբիցիաները ժամանակավորապես կողք դնի եւ Սյունիքի խնդիրներով զբաղվի...

Առայժմ միայն Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումն ենք լսում, ըստ որի՝ Սյունիքի ստատուս-քվոյի խախտումը կնշանակեր կարմիր գծի ոտնահարում՝ դրանից բխող հետեւանքներով, ինչը ողջունում ենք:

Ռուսաստանի պաշտպանական գերատեսչության ղեկավարներն են ժամանակ առ ժամանակ քննարկումներ անում մեր պաշտպանության նախարարի հետ: Դրա տեսանելի արդյունքն էլ այն է, որ սյունիքյան մայրուղիներում պարբերաբար հանդիպում ենք ՌԴ ռազմատեխնիկական միավորների, Գորիսի փողոցներում էլ՝ զբոսնող ռուս զինվորականների, ինչը նույնպես ողջունելի է, թեև այդպես էլ հստակ չի երևում, թե ՌԴ զինվորականները Սյունիքում ինչ առաքելություն են իրականացնում (խոսքը, բնականաբար, չի վերաբերում Մեղրիի սահմանապահ ջոկատին):

\*\*\*

Դե իսկ բուն Սյունիքում ...

Դեռևս պատերազմի օրերին, երբ վճռվում էր ոչ միայն Արցախի, այլև մեր հանրապետության լինել-չլինելու հարցը, մարզում նոր թափ առավ ընդերքի թալանը, հանքարդյունաբերական հայտնի ընկերության բաժնետոմսերը միմյանցից փախցնելու մոլուցքը: Այդ երեւոյթի դրսեւորումներից մեկի շուրջ ներկայումս ընթանում է դատական «ռազբորկա»...

Մարզի ընդերքի թալանի անվտանգ ընթացքն ապահովելու համար նույնիսկ ինչ-որ կուսակցություն է մոզոնվում, որի յուզբաշին Սյունիքի երբեմնի մարզպետներից մեկն է՝ Թուրք պիտակով:

Այդ «կուսակցություն» կոչված թայֆայի խնդիրը, որքանով տեսնում ենք, նաև մարզի հասարակության հետագա պառակտումն է, գիտակից սյունեցիներին, մտավորական սյունեցիներին հետապնդելը, սեփական դաշաղական խմբակի օգնությամբ անհնազանդների հետ հաշվեհարդար տեսնելը...

\*\*\*

Ստեղծված իրավիճակում կյանքը Սյունիքին եւ սյունեցուն ապրելու նոր բանաձեւ է պարտադրում...

Հիմա, առավել քան երբեւէ, օրվա հերոսը հայոց զինվորն է, այն տղաներն են, ովքեր երեկ գնացին ճակատ՝ հանուն հայրենիքի նահատակվելու պատրաստակամությամբ, ովքեր վաղն էլ (մեր կիսատ թողած գործը շարունակելու համար) նորից կրակագիծ են մեկնելու:

Օրվա հերոսը սահմանամերձ-սահմանապահ գյուղի բնակիչն է՝ սերմնացանն ու հոտաղը, որ թշնամու մարտական դիրքի անմիջական հարեւանությամբ տեր են կանգնում հայրենի քարափներին:

Օրվա հերոսը սահմանամերձի ուսուցիչն է, մանկապարտեզի դաստիարակը, բժիշկը, քարը քարին դնող բնակիչը:

Օրվա հերոսը նույն ինքը՝ Կապանի ընտրյալ համայնքապետ Գեւորգ Փարսյանն է, ում կենարար հետքը տեսնում ենք տարածաշրջանի սահմանային գյուղերում, ով մեն-մենակ մի ամբողջ կուսակցությունից առավել բեռ է վերցրել իր ուսերին...

Նաև նրանք են, ովքեր պաշտոնի բերումով, առանց ճղճղալու, սահմանում նոր դիրքեր են հիմնում կամ եղածն ամրապնդում:

Նրանք են, ովքեր տեր են մեր պատմական ժառանգությանն ու հայոց պատմական հիշողությանը:

Հենց այդպիսի մարդկանցով կամ մարդկանց այդ տեսակով է դարեր շարունակ Սյունիքը հայրենիք եղել մեր նախնիների համար, որն էլ ժառանգվել է մեզ:

Հենց այդպիսի մարդկանցով կամ մարդկանց այդ տեսակով ենք հաղթահարելու ներկայիս փորձությունը:

Այո, հողի մշակն իր գործը պիտի անի, մեր առյուծ տղերքը բանակային ծառայության պիտի մեկնեն, որ հայոց ազգային բանակի խամրած փառքը նորովի հառնի: Մեփական անշարժ գույքը վաճառքի հանած սյունեցին պիտի հետ կանգնի իր մտադրությունից, ամենատարբեր պատճառներով Սյունիքից հեռացածները պետք է տուն դառնան, մեր պառակտված վիճակից պիտի դուրս գանք, մեր երիտասարդ կանայք երեխաներ ունենան...

Հավատացե՛ք՝ այդկերպ նաև արթուն կպահենք այն նահատակների հիշատակը, ովքեր հանուն հայրենիքի զոհվեցին Արցախյան նորոյա պատերազմում. իսկ նրանց թիվը չափազանց մեծ է. միայն Սյունիքում 210 հոգու հողին ենք հանձնել արդեն, 23 անհետ կորածի հրաշք-վերադարձի համար էլ աղոթք ենք բարձրացնում առ Աստված:

Հավատացե՛ք՝ հենց այդպես հոդս կցնդեցնենք բոլոր նրանց զառանցանք-երազանքները, ովքեր, օգտվելով մեր տերության անտերությունից ու մեր իշխանավորների անհայրենիք եւ անժողովուրդ գոյությունից, հայոց սրբազան Սյունիքն իրենց պապենական կալվածքն են փորձում համարել...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/lineliutyay-banadze%D6%82y-erb-syuniqn-ayle%D6%82s-ayn-che-inch-er-kapitulyatsiayits-araj>

**06.04.2021**

**Աղբբեջանական զինվորականների կողմից Սյունիքում քաղաքացիական մեքենայի ուղղությամբ քարեր նետելը հաստատում է անվտանգության գոտու հրատապ անհրաժեշտությունը. ՄԻՊ**

Այսօր մամուլում լայնորեն տեղեկություններ են հրապարակվել այն մասին, որ առավոտյան ժամը 4:00-ից 5:00-ի սահմաններում Կապան - Երեւան միջպետական ավտոճանապարհի Դավիթ Բեկ-Շուռնուխ գյուղերի հատվածում տեղակայված աղբբեջանական զինվորականները քարեր են նետել հայկական պետհամարանիշով քաղաքացիական ավտոմեքենայի ուղղությամբ:

Տեղեկությունների հրապարակումից անմիջապես հետո ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է փաստահավաք աշխատանք՝ Պաշտպանի աշխատակազմի Սյունիքի ստորաբաժանման ներգրավմամբ: Այդ աշխատանքների շրջանակում Դավիթ Բեկ-Շուռնուխ գյուղերի միջև ճանապարհի միջադեպի հատվածի ուսումնասիրությունը հաստատել է, որ անմիջապես այդ վայրում տեղակայված են աղբբեջանական զինվորականներ:

Միջադեպի մասին տեղեկությունը Մարդու իրավունքների պաշտպանին հաստատել է Կապան համայնքի ղեկավարը և նշել, որ ավտոմեքենան եղել է քաղաքացիական՝ ուղևորներով, հայաստանյան համարանիշով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հատուկ արձանագրում է, որ տեղի ունեցածն ակնհայտորեն վկայում է ՀՀ քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված և միջազգայնորեն ճանաչված իրավունքների համար իրական սպառնալիքի մասին: Խոսքը վերաբերում է մարդկանց կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության և կենսական կարևորության այլ իրավունքների:

Այս միջադեպի վերաբերյալ տեղեկությունները ակնհայտորեն հիմնավորում են Մարդու իրավունքների պաշտպանի հայեցակարգն այն մասին, որ ՀՀ քաղաքացիների իրավունքները երաշխավորելու նպատակով Սյունիքում պետք է լինի անվտանգության գոտի:

Սյունիքի մարզի գյուղերի հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհներին Աղբբեջանական զինվորականներ, ցուցանակներ ու դրոշներ չպետք է լինեն:

Այս միջադեպի մասին տեղեկությունները ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն առանձին կուղարկի միջազգային կառույցներին, ինչպես նաև կներառի անվտանգության գոտու հայեցակարգում:

Աղբյուրը՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1613>

**02.04.2021**

**Միերը փորձում է Սյունիքում («Սյունյաց երկրի» համար) դատարանի ուժով կասեցնել Սահմանադրության 42-րդ հոդվածի կիրարկումը, որով հռչակված է խոսքի ազատության իրավունքը**

Երկու օր առաջ տեղեկացրել էինք, որ ապրիլի 1-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում կկայանա դատական նիստ թիվ ԵԴ/12885/02/18 քաղաքացիական գործով:

Խոսքը, եթե հիշում եք, Միերի (Պոլոսկով)՝ ընդդեմ [syuniacyerkir.am](http://syuniacyerkir.am) կայքի եւ խմբագիր Սամվել Ալեքսանյանի երեք հայցից մեկի շուրջ դատավարության մասին է:

Դատական նիստը կայացել է...

Սակայն պարզաբանվել է ոչ թե հայցվոր կողմի դիրքորոշումն առ այն, որ Պարույր Մեակը «Ղողանջ միջակությունը» գրելիս նկատի է ունեցել դեռևս չձևված Միեր Պոլոսկովին, ինչն էլ հանրայնացրել է [syuniacyerkir.am](http://syuniacyerkir.am) կայքը, այլ...

Հայցվոր կողմն անսպասելիորեն դատարան է ներկայացրել միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Որպեսզի ընթերցողին հասկանալի լինի, թե խոսքն ինչի մասին է, մի փոքր մանրամասնենք:

Դատական վեճի առարկան [syuniacyerkir.am](http://syuniacyerkir.am) կայքի 2018 թ. մայիսի 29-ի հրապարակումն է՝ «Միեր Պոլոսկով պսպղուն միջակությունը հրաժարվում է հոգուտ հանքագործների վերանայել իր ամսական աշխատավարձը, որ 20 մլն դրամ է»:

Հիմա... Հայցվոր կողմը, որպես հայցի ապահովման միջոց, պահանջում է պարտավորեցնել «Սյունյաց երկրին» ու նրա խմբագրին՝ այդ հրապարակումը հանել [syuniacyerkir.am](http://syuniacyerkir.am) կայքից եւ համանուն ֆեյսբուքյան էջից, որպեսզի մարդիկ այլևս չընթերցեն հոդվածը:

Հայցվորը նաև պահանջում է՝ արգելել «Սյունյաց երկրին» ու նրա խմբագրին՝ որևէ տեղեկատվություն (ցանկացած հանրամատչելի եղանակով) տարածել Միեր Պոլոսկովի գործունեության մասին՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ի դեպ, երկրորդ պահանջը հայցվոր կողմն առաջադրել էր նաև 2018-ի հունիսին, սակայն դատարանը 2018 թ. հուլիսի 10-ի որոշմամբ մերժել է հայցի ապահովման նման միջոց կիրառելու միջնորդությունը:

Եվ այսօր՝ երեք տարի անց, Միերը նորից է պահանջում կիրառել հայցի ապահովման նույն միջոցը, այն էլ (հակառակ գործող օրենքի պահանջների)՝ առանց նոր հիմքերի ու նոր հիմնավորումների:

Թե ինչ կորոշի դատարանը՝ կիմանանք մի քանի օր հետո...



Մինչ այդ ողջամիտ հարց է ծագում՝ ինչո՞ւ է երեք տարի անց եւ հիմա Մեերը պահանջում՝

1) լրատվական հարթակից հեռացնել **«Մեեր Պոլոսկով պսպղուն միջակությունը հրաժարվում է հոգուտ հանքագործների վերանայել իր ամսական աշխատավարձը, որ 20 մլն դրամ է»** հոդվածը, որի վերաբերյալ (իմիջիայլոց) դեռեւս չկա դատարանի վճիռ,

2) արգելել «Սյունյաց երկիր» լրատվամիջոցին՝ հրապարակել որեւէ տեղեկատվություն Մեեր Պոլոսկովի գործունեության մասին:

Հարցի պատասխանը երեկ ներկայացրել ենք դատարանին, դրան տեղյակ պետք է լինի նաեւ ընթերցողը:

Բանն այն է, որ **«Միվիլներ»** 2021 թ. մարտի 31-ին հրապարակել է հոդված՝ **«Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի ուս քաժնետերը դատի է տվել մյուս քաժնետերերին»** (հոդվածը՝ Մկրտիչ Կարապետյանի ստորագրությամբ):

Ըստ այդ հոդվածի՝ քաժնետերերից մեկը՝ Միխայիլ Զուրաբովը (ՌԴ նախկին նախարար) դատի է տվել կոմբինատի նախկին ու ներկա քաժնետերերին՝ պահանջելով անվավեր ճանաչել քաժնետերերի ժողովի մի շարք որոշումներ: Ընդ որում՝ վեճի թեման քաժնետոմսերի 75 տոկոսն է, որի գումարային արժեքը մի քանի հարյուր մլն դոլար է:

Մյուս կողմից՝ մայրաքաղաքային մեկ այլ լրատվամիջոց (**Civic.am**, Մարինե Խառատյանի ստորագրությամբ, 29.03.2021թ.) հանրայնացրել է Սյունիքի մարզային հեռուստատեսության լիցենզիան տարիներ շարունակ, հակառակ գործող օրենսդրության, կոմբինատին առնչվող այլ կազմակերպության ու մարդկանց կողմից օգտագործելու մասին:

Այնուհետեւ՝ վերջին մեկ տարում Քաջարանից «անհետացել» է Հայաստանի ամենախոշոր ներդրողը, ուրիշ մեկ ներդրող էւս, որոնց քաժնետոմսերի ընդհանուր գումարը 75 տոկոս է:

Հայ հանրությանը մինչեւ հիմա (նաեւ օրվա իշխանությունների կողմից) պատասխան չի տրվել, թե ինչպե՞ս են օտարերկրյա ներդրողներն «անհետացել» Քաջարանից եւ ու՞մ են անցել 75 տոկոս քաժնետոմսերը:

Ու որպեսզի այդ՝ առերեսույթ կոռուպցիոն ռիսկեր պարունակող խնդիրների մասին հանրությունը հանգամանակից տեղեկություններ չստանա, որոշել են դատարանի ուժով «Սյունյաց երկիր» բերանը փակել, ինչի համար էլ ապրիլի 1-ի դատական նիստում ներկայացրել են վերոնշյալ միջնորդությունը:

Մեր առարկությունները երեկվա դատական նիստում (բանավոր) ներկայացրել ենք վարույթն իրականացնող դատավորին:

Առարկությունների գրավոր տեքստն էլ այսօր ենք ուղարկել դատարան:

Մնում է սպասել, թե ինչ ընթացք կտա դատավոր Գայանե Խաչատրյանը հայցվորի տվյալ միջնորդությանը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին:

Ահա այսպիսի ընթացք է ունեցել 2021 թ. ապրիլի 1-ի դատական նիստը, որ քննում էր Մեերի (Պոլոսկով) հայցն ընդդեմ «Սյունյաց երկիր» լրատվամիջոցի:

#### Հ.Գ.1

Որպեսզի ընթերցողին հասկանալի լինի թիվ ԵԴ/12885/02/18 քաղաքացիական գործի ողիսականը, ներկայացնում ենք մեկ ուշագրավ հանգամանք էւս:

Արցախյան նորոյա պատերազմի ամենաթեժ ու հայ ժողովրդի համար ճակատագրական օրերին Մհեր Պոլոսկովի ներկայացուցիչը դատարան է դիմել հայցապահանջի փոփոխություն թույլատրելու մասին:

Այսինքն՝ այն օրերին, երբ Մհերի տարիքակիցները կրակագծում խրամատ էին փորում, կենաց-մահու կռիվ էին տալիս, զոհվում էին, վիրավորվում էին, դիակներ ու վիրավորներ էին կրակագծից դուրս բերում, ինքը զբաղված էր ոչ միայն կոմբինատի բաժնետոմսերի վերաբաշխմամբ, այլ «Սյունյաց երկրի» հանդեպ վրեժ լուծելով...

Մարդը միայն երեք տարի հետո է հասկացել, որ 2018-ի հունիսին դատարան ներկայացրած հայցադիմումով հնարավոր չէ պատժել ո՛չ Սամվել Ալեքսանյանին, ո՛չ «Սյունյաց երկրին»: Եվ որոշել է փոփոխել կիսագրագետ հայցապահանջը...

Սակայն Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 2020 թ. նոյեմբերի 6-ի որոշմամբ (դատավոր՝ Գայանե Խաչատրյան) մերժել է այդ միջնորդությունը:

### **Հ.Գ. 2**

Կոմբինատի մյուս բաժնետերերին դատի տված Միխայիլ Զուրաբովի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ հայցի ապահովման միջոց կիրառել՝ արգելելով ԶՊՄԿ-ին՝ որեւէ ձեւով վաճառելու, գրավադրելու կամ տնօրինելու ընկերության բաժնետոմսերը:

Եվ ի՞նչ է որոշել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը:

Որոշել է մերժել միջնորդությունը եւ հայցի ապահովման միջոց չկիրառել:

### **Հ.Գ. 3**

Անպայման ընթերցեք **«Մհեր Պոլոսկով պսպղուն միջակությունը հրաժարվում է հոգուտ հանքագործների վերանայել իր ամսական աշխատավարձը, որ 20 մլն դրամ է»** հոդվածը, եթե չեք ընթերցել մինչեւ հիմա: Զի բացառվում, որ դատարանը հրաշալի այդ հրապարակումը մեր հարթակից հանելու որոշում կայացնի եւ ձեզ զրկի ծանոթանալու հանքատերերին երեք տարի շարունակ անհանգստացնող հոդվածին:

### **Հ.Գ. 4**

Երեք տարվա ընթացքում դատարանում չի պարզաբանվել նաեւ, թե ինչպես է ՌԴ քաղաքացի Մհեր Պոլոսկովը հաջողեցրել իր հայցն ընդդատյա դարձնել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, երբ պատասխանողները Սյունիքի մարզից են:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/mhery-pordzum-e-syuniqum-syunyats-erkri-hamar-datarani-uzhov-kasetsnel-sahmanadrutyanyan-42-rd-hodvatsi-kirarkumy-orov-hrchakvats-e-khosqi-azatutyanyan-iravunqy>

**01.04.2021**

## **Մեղրիի Նոնաձորում կառուցվում է նոր թաղամաս Արցախից տեղահանված բնակիչների համար**

Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նոնաձոր գյուղում մեկնարկել են նոր թաղամասի շինարարական աշխատանքները: Այդտեղ առաջին փուլով նախատեսվում է կառուցել 30 անհատական բնակելի առանձնատուն՝ նախատեսված պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված բնակիչների համար: «Արմենպրես»-ի հետ զրույցում «Մեղրիի զարգացման հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սաքապետոյանը նշեց, որ

ֆինանսավորումն իրականացվում է բարերարների միջոցներով: Նախապատրաստական աշխատանքների ու երկու առանձնատան ֆինանսավորում առկա է:

«Մենք նախատեսում ենք այս ծրագիրը հանրայնացնել, իրազեկման լայն արշավ իրականացնել, որ աջակիցների շրջանակն ընդլայնվի: Նախնական տվյալներով՝ մայիսի սկզբին նախատեսում ենք կատարել ծրագրի բացումը, կլինի առաջին տների հիմնարկեքի արարողությունը: Իրազեկման լայն արշավի շրջանակում քարոզչական ակտիվ աշխատանք ենք կատարելու, որպեսզի շատերը տեղյակ կլինեն ու 1000 դրամից սկսած յուրաքանչյուրը ցանկության դեպքում աջակցի», -ասաց Արմեն Սաքապետոյանը:

Խոսելով նախապատրաստական աշխատանքների մասին՝ նա նշեց, որ տարածքը շատ ավերակ վիճակում էր, մեծածավալ հողային, հարթեցման աշխատանքներ են իրականացվել մոտ 3 հա տարածքում: Նախապատրաստվել է ամբողջ թաղամասի շինհրապարակը: Արդեն սկսվել է առաջին երկու տների կառուցումը: Առաջին փուլում նախատեսվում է կառուցել 30 տուն: Ընտրվելու են բացառապես այն ընտանիքները, որոնք երիտասարդ են, բազմազավակ են: Տները կառուցվում են 5-6 հոգանոց ընտանիքների համար:

«Շեշտը դրել ենք Արցախից տեղահանված, սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանիքների վրա: Նախատեսում ենք սկզբում գոնե 200 բնակչի տեղափոխում: Արդյունքում, դպրոցում շարժ կլինի, առաջ կգա մանկավարժներով տեղի դպրոցը համալրելու խնդիր, տրանսպորտի հարցի կարգավորում: Այսինքն՝ ենթակառուցվածքները պետք է բարելավվեն», - ասաց նա՝ ընդգծելով, որ ճանապարհների հետ կապված նույնպես խնդիր կա: Պայմաններն այնպիսին են, որ հողային աշխատանքների համար նախատեսված տեխնիկական շատ մեծ բարդություններով են տեղափոխել: Արմեն Սաքապետոյանի խոսքով, Նոնաձորը՝ հարավարևելյան ուղղության առաջին սահմանակից գյուղը փորձում են վերաբնակեցնել, այնտեղ աշխուժություն մտցնել:

Մեղրի համայնքի ղեկավարը «Արմենպրես»-ի հետ զրույցում ընդգծեց՝ ենթակառուցվածքների զարգացումն առաջնահերթ պետք լինի, մանկապարտեզ կառուցելու անհրաժեշտություն է լինելու:

«2016 թվականից առ այսօր Մեղրի խոշորացված համայնքի 4 գյուղում մանկապարտեզ ենք բացել: Նոնաձորն առաջիկայում ևս մեր ուշադրության կենտրոնում է, իմելու ջրի, ռոտոման ջրի հարցերը լուծված են, ջրավազան է կառուցվել, որը շատ կարևոր է: Մենք բարեբեր հողեր ունենք, եթե ծրագիրը կյանքի կոչվի, այստեղ բնակվելն ու աշխատելը գրավիչ է, եկամուտ ապահովում է: Այսօր մեզ մոտ աճեցվում է նուռ, արքայանարինջ, թուզ և այլն, անասնապահությամբ են զբաղվում», - ասաց համայնքի ղեկավարը: Նրա խոսքով, շատ կարևոր է նաև բնակիչների հետագա կենսագործունեության, ապրուստի միջոցների հարցը կարգավորելը:

Նոնաձորում ազատ հող չի մնացել: Կառավարության որոշմամբ Դատապարտյալների հիմնադրամին տարիներ առաջ հատկացվել է ժամանակավոր օգտագործման իրավունքով մոտ 140 հա հողատարածք, որն, ըստ էության, այսօր չի մշակվում: Խնդիր է դրված հողի օգտագործման իրավունք ստանալ: Նա նշեց, որ նախատեսում են այդ հողերը տրամադրել վերաբնակեցված ընտանիքներին:

«Մեղրիի զարգացման հիմնադրամ»-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Սաքապետոյանն էլ ավելացրեց, որ ոչ միայն քաղաքացիների վերաբնակեցման, այլև

վերջիններիս աշխատանքով ապահովելու խնդիրներն են լուծում: Հիմնադրամը բանակցել է նրան հումքով գինու արտադրությամբ զբաղվող ընկերությունների հետ, վերջիններս ունեն հետաքրքրություն և պատրաստակամ են մասնակցել տեղում կոոպերացիայի ստեղծմանն ու զարգացմանը:

«Գաղափարն այն է, որ ֆինանսական ներդրումներն անեն գործարարները, բնակիչները ոչ թե լինեն վարձու աշխատողներ, այլ հանդիսանան կոոպերատիվի աշխատողներ: Այդ եղանակով կարող ենք իրականացնել վերջիններիս սոցիալական ապահովությունը, միաժամանակ գաղափար կա էքստրեմալ տուրիզմի զարգացման հետ կապված: Աշխատանքները շարունակական են լինելու», - եզրափակեց Արմեն Սաքապետոյանը:

Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/1047681.html>

Կազմեց Ս. Ալավերդյանը